

ԳՐՈՂԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Արձակագիր Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպի բնաբանը՝ «Մի՞թե ես պետք է երգեմ քեզ օրոր, և արքայարար զնեմ գերեզման...» թելադրում է այն միտքը, թե Մահարու ասքը հայ ժողովրդի մի լավագույն հատվածի հերոսամարտի, նրա հայրենի հողի ողբերգական կորստի նկարագիրն է, հայ ժողովրդի ապրելու կամքի և ազատատենչ ոգու ներբողումը, ենթադրվում է նաև, թե հեղինակը պատմական իր վեպը շարադրելուց առաջ ուսումնասիրել է հարցի շուրջ ստեղծված հսկայական գրականությունը, արխիվային փաստաթղթերը, ծանոթացել պատմության կեղծարարների, այսպես կոչված, դուլթներին:

Այս դեպքում անշուշտ հեղինակի մշակած պատմագիտական ճշմարիտ ելակետը հնարավոր կդարձներ գեղարվեստական ընդհանրացումների օգնությամբ անմահացնել XX դարի իր պատմության ամենաողբերգական պահին հայ ժողովրդի ցուցաբերած անվեհերության պատմությունը:

Սակայն, երեսուն երկարածիգ տարիների ընթացքում ստեղծված և 1966 թվականին հրապարակ իշած վեպը հանգեցնում է երկու տխուր հետևությունների: Կամ հեղինակը հենվելով իր մանկական հիշողությունների և ընկալումների վրա թերագնահատել է պատմական գրականությունը և, մեղմորեն ասած, գրել մի անբարեխիղճ վեպ, և կամ էլ լավատեղյակ պատմական գիտության փաստերին, ստեղծել է իր ուրույն կոնցեպցիան, և դարձյալ մեղմ ասած՝ կեղծել պատմությունը:

Բոլոր դեպքերում մենք զործ ունենք պատմական կոնկրետ իրադարձություններից հյուսված հսկայածավալ մի ասքի հետ, որը (ուզում է այդ հեղինակը, թե ոչ), պետք է քննարկվի պատմական ճշմարտացի փաստերի հետ ունեցած իր հարաբերության հաշվեկշռով: Ուրեմն դառնանք պատմական հանրահայտ փաստերին: Անցյալ դարի վերջին քառորդում, առանձնապես Բալկանյան երկրների ժողովուրդների ազատագրությունից հետո հայ ժողովրդի արևմտահայ հատվածի կյանքի անապահովությունը հասել էր մի աստիճանի, որը լրջորեն անհանգստացնում էր բոլորին: Այդ օրերի մեր պարբերական մամուլի էջերը լի են ժողովրդի ունեցվածքի, պատվի ու կյանքի դեմ թուրք բռնապետության վայրագ ոտնձգությունների պատմություններով: Որքան ավելի հաճախ է դիվանագիտական շրջաններում արծարծվում «Հայկական հարցը», սուլթան Համիդի կառավարությունն այնքան ավելի սխտեմատիկ է դարձնում հալածանքը ժողովրդի նկատմամբ: Ինչու անցյալ դարի վերջին հայ հրապարակախոսները տպագրել են թուրքական կառավարության պարագլուխների խոստովանությունները՝ հայ ժողովրդին բնաջնջելու ճանապարհով «Հայկական հարցը» լուծելու իրենց դիվային ծրագրի մասին: Սկզբում այդ քաղաքականությունն իրականացվում էր զավառներում հարկահանության ձևով, համիդիականների ջոկերի ստեղծման միջոցով, հայերի նկատմամբ մահմեդական տգետ տարրերի ֆանատիզմը բորբոքելու ճանապարհով: Արդեն 90-ական թվականներին հայ մամուլը շարունակաբար հրապարակում է օր-ավուր սաստկացող բռնությունների, սպանությունների, ունեցվածքի բացահայտ հափշտակության և ձերբակալությունների բազմաթիվ փաստեր: Սա դեռ նախօրյակն էր. մի շրջան, երբ սուլթան Համիդը մի ձեռքով սանձագերծում էր ավազակ Մուսա բեկին, մյուս ձեռքով կազմակերպում նրա դատական հանդեսի խայտառակ ֆարսը: Մուսա բեկը սրիյար է ճանաչվում. պարզապես դատական այդ ցույցը հարկավոր էր՝ խաբելու եվրոպական համառ ժուռնալիստներին, և ոչ այնքան համառ դիվանագետներին: Սրանք իրենց էրկրների քաղաքական նպատակների թելադրանքով միայն՝ երբեմն-երբեմն քաղաքավարությամբ հիշեցնում էին սուլթանին, թե հարկավոր է կատարել նաև 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները: Դարավերջին վիճակն ավելի քան որոշ էր: Արևմտյան դիվանագիտությունն ապացույցում է իր նենգությունը: Բոլորի համար պարզ էր արդեն, որ «Հայկական հարց» կոչվածը լուկ ողորմելի մի խայծ էր՝ «Արևելյան հարցով» նախատեսվող եվրոպական պետությունների նվաճողական ծրագրերի իրականացման օպերացիաներում: Սուլթան Համիդը սանձարձակ է դառնում. էլ հարկ չկար ֆարս խաղալու... 1894—96 թվականներին արևելահայ պարբերականների էջերը (և գրաքննական արխիվները) լցվում են արևմտահայ թղթակիցների տազնապալից հաղորդումներով: Թուրքական կանոնավոր զորարանակը Ջաբիր

փաշայի զլխավորությամբ բնաջնջում է Սասունը, Դրան հաջորդում են կոտորածները ողջ Արևմտահայաստանում: Եվրոպական ժուռնալիստների հարցումներին ի պատասխան թուրք զինվորականները պատմում են, որ իրենց ուղարկել են հարձակման, նախապես սուլթանի ֆերմանի հետ ծանոթացնելուց հետո: Այնտեղ ասված էր, թե հայերին անխնայորեն պետք է ոչնչացնել սուլթանական կառավարության դեմ ապստամբություն բարձրացնելու համար: Սուլթան Համիդի բրունությունների հետքերով հայ մտավորական գործիչների մի խումբ անցնում է արևմտյան Հայաստան՝ օգնելու իր եղբայրներին: Դարասկզբին այդ գործիչները հրապուրված երիտասարդ թուրքերի սահմանադրական խաղով, լուսավորական գործունեություն են ծավալում տեղի բնակչության մեջ, բայց վրա հասած Աղանայի ջարդերը զգաստացնում են բոլորին: Բոլորին, ովքեր ծանոթ էին պատմության դասերին: Այդ արդեն այլ հարց է, որ ազգային կուսակցությունները չկարողանալով ճիշտ կողմնորոշվել պատմական համապատասխան իրադրության մեջ, իրենց գործունեության այլ հատվածներում թույլ տվեցին մի շարք կոպիտ սխալներ, որոնք տաճկական կառավարությունն օգտագործում էր նոր պրոպագանդաների և բռնությունների համար: Կոնկրետ Վասպուրականում նրանց ծավալած գործունեությունը թելադրված էր հայ ժողովրդի զլխին կախված երկրորդ եղենին դիմադրավելու պաշտպանական նպատակներով¹: Ո՛չ,— ասում է Գուրգեն Մահարին, պետական քաղաքականությունը սնվել է հայ հեղափոխականների ավանտյուրաներով միայն: Այդ արևելահայ «անխոհեմ» եկվորներն են, որ Արևմտահայաստանում «քաղաքական եղանակ» են ստեղծել: Կառավարությունն ստիպված էր զենքի դիմել, որովհետև՝ «Մովսես իր զույնը երկնքից է ընդունում»: Այնուհետև գիտակցաբար մերժելով պատմական կոնկրետ պայմաններում ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման հսկայական նշանակությունը, Մահարին հավատարիմ իր մշակած սկզբունքներին՝ ծաղրում է այդ գործը: Նրա համոզմունքները համեմատելիորեն բաժանում են վեպի բոլոր հերոսները, եթե նույնիսկ իրենց գործողությունների մեջ նրանք համեմատյալ չեն իրար հետ: Այսպես, Աղթամարի վանքի վանահայրն այն կարծիքին է, թե «օտարամուտ բախտախնդիրները» ազգը փրկելու անվան տակ «...դուպլուտով են զբաղված: Նրա քարտուղար Միհրանը համոզված է «սխևթորների» գործի և նպատակի անմարդկայնության մեջ: Նրանց նպատակներն արատավոր են, իսկ իրենք՝ մի արյունոտ բուռնությամբ Վասպուրականի զլխին»: Թե՛ վանահայրը, թե՛ քարտուղարը վկայակոչում են նախկինում զուլված իրենց սեփական և ազնիվ ռազմիկներին, որոնց հակադրում են եկվորներին²: Դժնրցի Դավիթը պտնում է, թե դրանք «եկան ու կեղտոտեցին մաքուր Վանը, անբույն կկունների նման, որոնք բույն են դնում ուրիշ թռչունների հյուսած բներում, վարակելով օդը: Վանը՝ վանեցիներին: Թող կորչեն այդ օտարամուտները» (էջ 298):

Սիմոն աղան տրամաբանում է «Մեր պապերն ասեն են — գող որ տնից եղնի՝ եզն երտսից կխանի»... Զվան երտսից կախեր են... ի՛նչ մնացե... մնացե, որ եզ դուս բաշեն, տանեն մորթեն վասն փառաց ազգի» (էջ 58): Փանոս էֆենդին մոլուցքով դանդաղում է. «սրիկաներից» «Սա կյանք չէ, սա ազգային գործ չէ, սա ավազակություն է» (էջ 172): Որքան էլ արտառուց լինի այդ, միևնույն մտքերն է դարգացնում և ինքը շեֆը՝ Իշխանը: Նա թերահավատ է դեպի իրենց գործը: Իշխանը համոզված է, որ ժողովուրդը չի սիրում իրենց, և եթե չլինի վախի զգացումը, վանեցիները կասեն. «Աշխարհում ուժի օրենքն է տիրում և չկան երջանիկ հպատակներ և չկան արդար տիրողներ: Մտրակը մտրակ է, անգամ եթե նրա կոթը ոսկեջրած լինի: Մեկ մտրակի տակ էինք, ձեր գալով երկու մտրակի տակ ընկանք, մեկ լծի տակ էինք, լուծը դարձավ կրկնակի: Գնացե՛ր, դնացե՛ր ձեր եկած ճանապարհով ու թող օրհնված լինեն ձեր կրունկները» (էջ 290—91): Իշխանի ինքնամերկացման շատ անհաջող հնարանքով Մահարին հավատացնել է ցանկանում, թե ժողովուրդը դառնացած է, որովհետև նա հարմարվել էր սուլթանական մտրակին (որի հարվածները զրեթե չէր զգում), մինչդեռ եկվորները պղտորում են նրա անդորրը (նրան սովորեցնելով չմորթվել լոնկային): Իշխանը շարունակում է ինքնախարազանումը. «Նրանք բերին արգելված գրքեր, արգելված զենքեր, արգելված երգեր, ու ի՛մա... արևավիհի սպառնում է տա-

¹ Պատմական փաստաթղթերը ու մի կասկած չեն թողնում այն բանում, որ դեռևս 1897 թվականին հայ մտավորականները տեսնում էին այդ եղենի ուրվագիծը: «Հայկական հարցի» անլուծելի հանգույցի հանդիման Արդար Հովհաննիսյանը մարգարեանում էր, գրելով. հայերը «հարյուր հազարավոր զոհեր տալուց իսկ մնում են իբրև պահեստի զոհեր տաճկական արյունոտության և զազանության»: (Ընդգծումը մերն է — Մ. Մ., տե՛ս «Արձագանք», 1897 թ., № 14):

² Թող հայտնի լինի քաղաքական ծավալուն այս վեպի հեղինակ ընկեր Մահարուն, որ նրա թեթև ձեռքով «եկվորներին» հակադրված «տեղացի» 3 հերոսներից երկուսը նույնպես «եկվորներ» էին, ժամանակին պարտքի բերումով Վասպուրական եկած՝ Արևելահայաստանից:

բաժվել աշխարհով մեկ և սպառնում է կյանքի ժողովուրդներ ու պետություններ...» (ընդգծումը մերն է — Մ. Մ., տե՛ս էջ 305—306)։ Մեուս է հետևեցնել միայն, որ արհավիրքը նախապատրաստում էին ոչ թե Թալեաթ-էնվեր-Ջեմալ եռյակը, այլ Պեշիկթաշլյանի և Սիամանթոյի երգերը։ Այս հակապատմական եզրահանգման «տրամաբանական» վախճանն է՝ Քեմալի փիլիսոփայությունը, որն անվերապահորեն բաժանում է վիպասանը Քեմալն զգուշացնում է «անխոհեմ» հպատակներին, վկայակոչելով տիրողների և հպատակների աշխարհում «սրբագործված» օրենքը։ Հայերը պետք է մեկընդմիջտ հասկանան, որ պետք է լինի պարտականությունների և իրավունքների արդար բաշխում և փոխադարձ հարգանք։ «Գործը փշացնում է երրորդ ուժը», որը միջամտում էր պետականության և նրա սահմաններում ապրող հայության գործերին «...Ապրանքներ կան, որոնց ներմուծումը թանկ է նստում, թանկ ու ծանր» (256)։ Բարբարոս տիրոջ և հյուսիսային համերաշխ գոյակցության փիլիսոփայությունը, որը ամբողջ մեկ դար մերժվում էր բալկանյան ազատասեր ժողովուրդների թափած արյամբ և զենթունցիների ելույթով, համակողմանիորեն զարգացնում է Մահարու գլխավոր հերոսը՝ վաճառական Օհանես աղան։ Արևելահայ «կաշաղ-ավազակները» նրա համոզմունքով խաղում են աշխատասեր և անվնաս զգեզի բնի հետ։ Հատուցումն արդա՛ր կլինի, տրամաբանում է Օհանես աղան։ Ըստ նրա՝ կա պետություն, և կան հպատակներ։ Որպեսզի տերությունը չմորթի, չպետք է շարություն անել (իսկ այդ ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ ազատություն ուզել)։ Բայց լսենք իրեն՝ Վանի «Մեծ հային»։

— Օհանես աղա, հարցիս պատասխան տուր, ազատություն ուզելու համար մարդուն կբռնեն, վիզ կկտրեն։

— Վիզն էլ կկտրեն, կախաղան էլ կհանեն, աչքն էլ կփորեն։

— Էդ եղավ կառավարություն։

— Ապա ի՞նչ կուզիր, էֆենդի։ ...Դու կառավարության քթի տակ զենքեր բերես և տներն ու վանքերը դարձնես ջաբախանա, դու գաղտնի թերթեր, գրքեր ստանաս կառավարության դեմ, ֆեդայիներ սար հանես, փաշա ու կայմակամ սպանես, դու գիշեր-ցերեկ երդեր երգես ու «Զայն տուր, ո՛վ ծովակ» բռռաս, ես քո գլուխ մածե՛մ, ասեմ աֆերի՛մ... (էջ 234)։ Այնուհետև Մահարին համոռոտն շարունակում է գծում ու շահամուլ, բարոյական արգահատելի նկարագրի տեր Օհանես աղայի աշխարհայացքի «բարձրակետից» սրբագործել տեր ու ծառայի «ուսմունքը»։ Այսպես, «Տան մեծ հայրն է, տան կառավարությունը։ Որդիները նրա հպատակներն են. կանգնել են, թե ազատություն կուզենք, դու հե՛շ, դու չկա ս, տան տերը մենք ենք, խանութի տերը մենք ենք, այգու տերը մենք ենք. համաձայն չե՛ս, կորի զնա անհատակ ծով, կեցցե՛ ազատություն, հեղափոխությունն էլ հետը։ Ո՛ր հայրը կհամաձայնի, ի՛նչ սև կապի կառավարություն» (235—36)։ «Իրենց զուխն ուտի իրենց հեղափոխություն, — եզրափակում է իր միտքը Օհանես աղան — ժողովրդին ալբել է հաբկավուր. սև օրով, սպիտակ օրով, բայց թող ապրի, Թող ապրի՛, ջանք, թող ապրի, թող դժվար ապրի, բայց ապրի՛...» (ընդգծումը մերն է — Մ. Մ.)։ Նրա հասկացողության մեջ ժողովրդի գլխին կախված ամենամեծ աղետը արտասահմանյան գրքեր և թերթեր տարածող, կարդացող, բաժանող «անմիտներին» վարքագիծն է, և տե՛ղը կլինի, եթե տերությունը դրանց «խերն անիծի»։ Նրա մտքերը բաժանում է գործակատարը՝ Սեթը. հապա ինչպե՛ս, ռեստորան են Ժնև, երկար գավազանը պարզեր են Թուրքիա, օձի բունի հետ կխաղան. ինչի՞ են եկել, ո՛վ է նրանց հետևից կարմիր խնձոր ուղարկել, ո՛վ է խնդրել, որ նահատակվեն» և ի վերջո՝ հարցերի հարցը. «Ի՛նչ կուզեն խեղճ ժողովրդից»։ Ի դեպ, երբ Վոսմյանը հարցնում է Օհանես աղայից, թե քուլոնները հո չե՛ն անհանգստացնում նրան. «Ձեն չկա, — ասում է անվանի վանեցին, — բայց ի՛նչ օգուտ, պարոն Վոսմյան, ապահովություն չկա, ապահովություն» (ընդգծումը մերն է — Մ. Մ., տե՛ս, էջ 228)։ Հայերն ապահովություն չունեն, որովհետև նրանց անհանգստացնում են գործիչները, բայց ահա, մեծ եղեռնի նախօրյակին Վանի փողոցներով անցնող զինվորական շարասյունը և նվազախմբի աղմուկը նրանց չեն անհանգստացնում, կամ՝ եթե վախենում են, ո՛չ այնքան. «մարդ կվախեցնեն», — քմիծաղում է Օհանես աղան։ Այս արատավոր փիլիսոփայությունն իր հետ բերում է համապատասխան արտահայտչական միջոցներ։ Ազգային գործիչները բարոյազուրկ ու փառասեր բախտախնդիրներ են, որ սարսափ են ազդում ոչ միայն իրենց հակաժողովրդական գործերով, այլև տեսքով. «Այս տանից ես սաղ սալամաթ դուրս չեմ գա», մտածում է Օհանես աղան իշխանի տանը։ Արամ Մանուկյանի երեսին նա շարտում է. «դու խիղճ չունես, դու անխիղճ հեղափոխական ես, դու հեղափոխական չես, դու թուրք ես, թուրքից էլ բեթար։ Ձեր բռնած գործն էլ թուրքի կեղտոտ գործ է։ Թուրքը մի կողմից, դուք՝ մյուս, ժողովրդին կերաք» (217)։ Սակայն, միայն գործիչները չեն նկարված մահարիական սարկազմի վրձնով։ Իր ոգևորության մեջ Մահարին սև երանգով է պատել հայկական մեծ եղեռնի նախօրյակին հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացման եզակի հատվածներից մեկը — Վասպու-

րականը և նրա ժողովրդին: Այս իմաստով ուշադրության արժանի է նրա մի «գլուխը»: Մսագործ Միսոն մի այծ է տանում սպանդանոց: Զարմանալի կերպով զոհը չի դիմադրում: Երբ այծը փուշտում է, պարզվում է, որ նա հարբուխ ունի, որի պատճառով չի զգում արյան հոտը և ահա Մահարին ղեղումների մեջ է ընկնում: Եթե Միսոն հրապարակախոս, կամ քաղաքական գործիչ լիներ, ապա մի հողված կգրեր, որտեղ հայ ժողովրդին կհամեմատեր հարբուխ ընկած այծի հետ, որը չի զգում մոտալուտ արյան հոտը: Հայ ժողովրդին փրկում է այն պարագան միայն, որ Միսոն անգրագետ է և բարեբախտաբար՝ սոսկ մսագործ: Իսկ եթե, աստված մի արասցե, լիներ հակառակը՝ նա իր հողվածը կուղարկեր ոչ թե Վանում լույս տեսնող մամուլի օրգաններին (ինչպես ենթադրում է «ոչ թե հարբուխով հիվանդ, այլ իսկապես միամիտ ընթերցողը»), այլ Պոլսի, Թիֆլիսի, Փարիզի, Բոստոնի, ժնևի թերթերին, քանի որ, ինչպես գրում է հեղինակը. «Այն ժամանակ հայրենասերները գտնվում էին ահա վերոհիշյալ այդ քաղաքներում և ներմուծվում էին ի հարկին: Նրանք այդ քաղաքներում հրատարակում էին թթու-կծու հայրենասիրական թերթեր: Այս ներմուծվող գործիչներից և փորձիչներից շատերը նահատակվեցին հայրենիքի համար՝ հայրենիքը շտեմած»: «Հրաշք բան,— զարմանում է քաղաքացիական անձնագրահանության գաղափարին և կենդանի օրինակներին անտեղյակ հեղինակը,— դեռ արձանագրված չէ մարդկային պատմության մեջ մի դեպք, որ մի երիտասարդ սպանվի, կամ ինքնասպանություն գործի իր սիրած աղջկա համար, որի դեմքը չի տեսել» (էջ 176): Այս հատվածից կարելի է անել այն հետևությունը, թե արգահատելի է հրապարակախոսը, որը ահազանգում է ժողովրդին՝ վերահաս վտանգի մասին: Երիցս նշավակելի են այն, այսպես կոչված, արտասահմանյան (իմա օտար) հայ օրգանները, որոնք հայերեն լեզվով խոսում են հայերին սպառնացող անխուսափելի աղետի մասին, և երրորդ, պատմությունը չգիտե մի դեպք, որ մեկն սպանվի սիրածի համար, որին չի տեսել: Կարելի է ենթադրել, թե թուրք բռնակալության դեմ հույն ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում զոհված Բայրոնը ծնվել ու ապրել էր գեղեցիկ Հունաստանում: Մահարին զարմանալի անհոգության և մարգարեի սառնասրտությամբ (որն իջել է անիծելու Սողոմ-Գոմորը), ծաղրում է կյանքը հայրենիքին ղոհաբերելու մեծագույն խորհուրդը, որն անհիշելի ժամանակներից սրբագործվել է սերունդների կողմից՝ իբրև քաղաքակրթության մեծագույն նվաճում: Նույն ինքնավստահությամբ էլ նա ծաղրում է ազգային սրբությունները, գինարբուքի երգեր դարձնում «Ես երգելով կուգեմ մեռնել», «Կիլիկիա», «Եղբայր եմք մեք» բանաստեղծությունները: Բայց արդարամիտ լինենք: «Այրվող այգեստաններ» վեպում կան և արտահայտություններ, որոնք վկայում են, թե հեղինակն այնքան էլ անտեղյակ չէր կատարվող անցուդարձին: Նա, օրինակ, հիշում է 1896-ի «Մեծ դեպքերը», երբ թուրքերը թալանում են սուրբ Գրիգորի վանքը, սպանում վանահորը, կողոպտում վանքի ոսկեղենն ու արծաթեղենը: Զգուշավորությամբ պատմում է, թե քաղաքի շուկայում պատահաբար արձակված հրազենի պայթյունը ինչպես է սարսափեցնում հայ խանութպաններին, և մի այլաբանությամբ նույնիսկ շեշտում է, թե «Միսոն ծով մտածի նման՝ չզգաց անձրևի գալը»: Սրանք, սակայն անցողիկ տպավորություններ են, որոնցից պետք է կռահել միայն, որ հայ ժողովուրդը ծովում էր ապրում: Բարոյականն այն է, թե ծովում շթրջվելու և «դեպքերի» կրկնությունից խույս տալու համար պետք է ներփակվել բարիքներով լի տունտան մեջ, ապրել «խելոք», և զոհություն հայտնել աստծուն, որ գլուխդ ուսերիդ վրա է: Քաղքենու այս ճղճիմ ու տաքուկ կյանքի պատկերը հյութեղ երանգներով զոված է Օհանես աղայի և նրա բաժակեղբայրներ Սիմոն աղայի և Փանոս էֆենդու առօրյայում:

Վանի հասարակության փոքրիշատե մթողջական նկարագիրը ներկայացված է վաճառականության դասի միջոցով: Սակայն ինչի՞ է հանգում դրանց գնահատականը: Վաճառականները շատ քիչ բան ունեն մարդկային առաքինություններից: Օհանես աղայի իսկ խոստովանությամբ (որը շարունակ օգնում է հեղինակին՝ պարզելու նրա հսյացքները), քաղաքի վաճառականները գաղաններ են, իսկ իր տունը՝ գազանի բուն է, իսկապես, Մուրադխանյան եղբայրները իրենց հավաքական արատներով գերադանցում են ամեն մի հարուստ երևակայություն: Հայ հասարակության մյուս խավերի ներկայացուցիչները ետ չեն մնում սրանցից: Վանահայրը մարդասպան է և անբարոյական, ազգային գործիչները՝ բախտախնդիրներ ու կնամուլներ, մտավորականները՝ շաղակրատներ և ապիկար քաղքենիներ, կանայք՝ սեթևեթ տիկնիկներ են, մեծ մասամբ թեթևաբարո, կամ անառակ և գող արարածներ: Ահա այս գորչ և գաղափարազուրկ խառնամբոխը ուտում է, խմում, տրամաբանում՝ «բանականի» և «բնականի» մասին, զվարճանում, դավեր նյութում նորից խմում՝ անզուսպ ու անհագ:

Իսկ գրադարանները դատարկ են մշտապես, գրադարանապետը այնքան տգետ, որ «Տարազը» խառնում է Արազի հետ, խմբագրությունը ենթադրվում է գինապահեստ, առաջնորդարան հասկացությունն առհասարակ բացակայում է:

Զկա մի ծանրակշիռ փաստ, գեղարվեստորեն հիմնավորված մի պատկեր, որը ցույց տար, թե այդ մարդիկ ապրում են ճնշման ու բռնության պայմաններում, մի ակնարկ՝ հայերի քաղաքական անազատության և ազատասիրական բաղձանքների մասին: Հարց է ծագում, եթե այստեղ ամեն ինչ խաղաղ էր ու բարվոք, դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին «Русский курьер»-ը ի՞նչ հիմքեր ուներ ահազանգելու, թե «Հայաստանում (իմա Արևմտահայաստան) և Պոլսում շարունակվում են հայերի ձեռքարկությունները: Հայաստանում բանտարկվածների մեծամասնությունը շղթայակապ է պահվում», և թե՛ «հայերը ինչպես Հայաստանում, նույնպես և Կ. Պոլսում, սարսափի մեջ են»³: Կարինի 70 հայ երիտասարդների ձեռքարկության առիթով «Արձագանքի» տեսաբանը ի՞նչ հիմքեր ուներ մեկնաբանելու, թե այդ երիտասարդները գնդի ձեռքից ինչպե՞ս ազատվելու դեմ, «որոնց կառավարությունը ուժ, կամ կամֆ չունի զսպելու»⁴ (ընդգծումը մերն է — Մ. Մ.): 1888 թվականին Վանից արտասահման ուղարկված մի այլ թղթակցության մեջ հայտնվում էր, թե կառավարությունը խուզարկում է Գարեգին Բաղձեցյանի, Մկրտիչ և Հովհաննես Խանիկյանների տները և նրանց ձերբակալում: Խուզարկում են խորհրդարանի տները և գրքերը բռնագրավում, Հովհաննես Թերլեմեզյանի գրքերը գրավում են, իրեն ձերբակալում: Զերբակալվում են Կարապետ Գյուլումյանը, Կարապետ Ազրիպասյանը, Ալյուր գյուղից 7 հոգի և այլն: Գարեգին Բաղձեցյանին բանտում պահում են իբրև «վտանգավոր հեղափոխական», «վիզեն, ձեռքերեն և ոտներեն ծանրածանր շղթայներ կախած»: Այնուհետև՝ «Այսօր Վարազա վանքը խուզարկվել է, շատ մը գիրքեր, որոց մեջ թանկագին հնություններ ալ կը գտնվին, գրավել տարել են: Մատենադարանը կնքվել է: Դանիել վարդապետ, վանքին միաբաններն մին, ձերբակալվելով բանտարկված է»⁵: Եթե Վանում չեն եղել լուրջ և հայրենասեր գործիչներ, ովքեր էին մասնակցում 1880 թվականի Վասպուրականի հայերի ներկայացուցչական ժողովին, որի որոշումով ժողովրդի անունից դիմում ուղարկվեց Ալեքսանդր 2-րդին:

Ովքեր էին մասնակցում Վան քաղաքի բնակչության 1882 թվականի ժողովին, որի կողմից Ալեքսանդր 3-րդին ուղղված նամակում ասված էր. «Թուրքական կառավարությունը 61-րդ հոդվածով նախատեսված ռեֆորմները կատարելու փոխարեն, որը վերջ կտար մեր ցավերին ու տառապանքներին, ուժեղացրել է ճնշումները և բռնությունները: Եթե ամեն ինչ մնա անփոփոխ, մենք մինչև վերջին մարդը կոչնչացվենք: Մենք կկործանվենք,— գրում են Վան քաղաքի հայերը,— եթե Ձեր մարդասիրական ներգործությամբ չօգնեք այս հարցի լուծմանը» (ստորագրված է Խրիմյան, Հովհաննիսյան, Խանչյան)՝ Ուրեմն անկաշառ պատմությունը հաստատում է, որ Վանի կազինոյում օդի և վարդնոցներում «չայ» խմող էֆենդիներից բացի կային ազատագուրկ հայեր և բնակավայրային, կային ըմբռնատաղ հայեր և ոստիկանություն, կային «ծանրածանր շղթայներ» և հայ բանտարկյալներ: Այս 1890-ական թվականներին Այնիշ, Գուրգեն Մահարին ձգնում է ապացուցել, թե 1910—15 թվականներին Վանում գիտակից վանեցի չկար: Հիրավի, լայնածավալ այս վեպում Վանը կա, բայց չկա վանեցին, բուն ժողովուրդը, արհեստավորությունը, Կրկին օրինական հարց է ծագում, եթե Վանում չեն եղել ազատասեր ու գիտակից մարդիկ, չի եղել միասնություն ու կամք, ինչպե՞ս է դուրս եկել Վանի ինքնապաշտպանությունը: Ովքեր էին կոչվում դիրքերում, մարում հրդեհները, պետնափոր ուղիներով մերձենալով հակառակորդի դիրքերին՝ պատուհասում թշնամուն: Ովքեր էին հրդեհում թշնամու պաշտպանական կետերը, փորձում իրականացնել կապը Այգեւստանի և քաղաքի միջև, վնասագործում թշնամական ուժերը և կրակի տարափի տակ պարկուճներ հավաքում: Վեպում իզուր կլինի փնտրել հայ կնոջ և մանուկների հերոսական կերպարները, որովհետև չկա՝ ինքնապաշտպանության օրերի Վանը, մեկ բռնցքի պես պրկված հերոսական ժողովուրդը, չկա՝ հաղթանակի հավատով առնչուն պատմական օրերի մթնոլորտը: Բայց կա այդ ամենի ծաղրանկարը: Մարդիկ հատուկ լաբորատորիաներում և արհեստանոցներում մեծագույն կազմակերպվածությամբ վառող են ստանում և փամփուշտներ պատրաստում, վանեցի մարտիկները հրճվում են իրենց ձեռքով ձուլված առաջին թնդանոթի երևույթով, իսկ Մահարին հնարավոր է գտնում ծաղրել այդ թնդանոթը, որի արձակած ուժերը չի հասնում նպատակին, չի պայթում: Բայց պատմությունը ինչ որ չափով ծանոթ հեղինակը չի կարող չիմանալ, որ եթե այն չի հասնում նպատակին Վանում, պայթում է Շատախում: Շատախի գինվորական մարմնի օրագրությունը ասլիլի 20-ին ազդարարում էր.

3 Վրացական պետական պատմական արխիվ, ֆոնդ № 480, դիրք 1, գ. 871:

4 «Արձագանք», 1883 թ., № 1:

5 Վրացական պետական պատմական արխիվ, ֆոնդ № 480, դիրք 1-ին, գործ № 871:

6 Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 470:

«Մեր շինած թնդանոթները այսօր սկսեցին գործել, թշնամու դիրքերը հրաշալիորեն կքանդեն...»։ Ապրիլի 23-ին. «Այսօր նոր թնդանոթ մը շինվեց, քալիրը 4 սանտիմետր, երկարություն մեկ և եես մետր։ Այդ թնդանոթով այսօր շորս ումը արձակեցինք»։ Գուրդեն Մահարին ազդարարում է. «Բուլղարացի Գրիգորը հնարում է առաջին հայկական թնդանոթը, որը ճիշտ է գնդակ արձակելու գործում մի րան չարժե, բայց որոտալու տեսակետից ետ չի մնում իսկական թնդանոթից, Կարեն-վորեն արդեն ուրտն է. — հեզնում է Մահարին, — այս բառերն ընդգծելով՝ ի ցույց և ի գիտություն ոչ խորագետ ընթերցողին, — բուլղարացի Գրիգորը, խոհուն զինագետ՝ պահում էր մեծ գործի բերող ոճը։ Այո, կարևորը որոտն էր, — շարունակում է շարախնդալ հեղինակը (ընդգծումը հեղինակինն է, տե՛ս էջ 532)։

Վանի հերոսամարտերի նկարագրությունը «Այրվող այգեստաններ» վեպի ամենախոցելի հատվածն է։ Եթե առաջին հայացքից թվում է, թե այս թեմային ձեռք զարկող հեղինակը գեղարվեստական խոսքի օգնությամբ պետք է անմահացնեն զեյթունցիների արժանավոր ժառանգորդներին և գեթ «Մուսա լեռան» շնչով ջանար ստեղծել Վանի ժողովրդի հավաքական կերպարը, ապա այդ հույսերը հօդս են ցնդում։ Մահարին այնպես է խճճվել կենցաղային մանրուքների, կադինոյի շոգիների, երկու տասնյակի հասնող երկարաշունչ երազների և սեքսուալ տեսարանների նկարագրությունների մեջ, որ հերոսամարտի շեմին նրա երևակայությունն ակնհայտորեն սնանկացել է։ Վեպի միայն մեկ վեցերորդն զբաղեցնող այդ հարցը իր ներսում նորեն սեղմվել է՝ տեղը զիջելով Օհանես աղա — Վերժին — Սաթենիկ եռյակի անկողնու և Օհանես աղա — Գեվորգ — Փանոս էֆենդի շարքի կերուխումի արտառոց տեսարաններին։ Ոչինչ որ այդ ամենն ուղեկցվում է՝ այնտեղ, ինչ-որ մի տեղ պայթող ումբերի ձայներով։ Հերոսները չեն նեղվում, որովհետև «վարժության խնդիր է»։ Ծակատագրական այս օրերի նման անբարեխիղճ նկարագրությունը զարմանալի տրամաբանությամբ շարունակ ուղեկցվում է հեղինակի արտակարգ զվարթ, «հանաք անելու» տրամադրության հետ։ Նա ծաղրում է ժողովրդի ազգային-ազատագրական ձգտումները և երազանքները (զեղումները «Մարինեի չափ սիրուն հայրենիքի մասին»), զավեշտի է վերածում զինվորական նվազախումբը, հայերենի բոլոր հոլովներով հոլովելով ֆանֆար բառը և հերոսամարտի ընթացքում դրա բարոյական ներգործությունը սարկաստիկ ծիծաղով գերադասելով կուսակցությունների ջանքերից։ Մաղրում է Պերճ Պոռչյանին, անպատեհ զուգահեռներով վիրավորում նրիմյանի հիշատակը և այլն։ Մի քանի տասնյակ էջերում Մահարին մեծագույն ոգևորությամբ և ինքնահիացումի անթաքույց հրճվածքով նկարագրում է Օհանես աղայի և նրա բարեկամների երթը ավանակներով, տարբեր «գասերի» պատկանող ավանակների «հագուստը», «խոր ապրված զոհնը», նրանց քմահաճույթները. (ի՛նչ փուլթ, թե այդ տարիներին Վանում ավանակները վաղուց արդեն փոխադրական միջոց չէին. այդ անմեղ կեղծիքը ավելացնում է զավեշտի տարրը, հետևապես ընդունելի է)։ Հեղինակը շարունակ պարզունակ ուժգնություն է առաջարկում, անհարկի և անլուրջ կատակներով միջամտում դեպքերի լուրջ ընթացքին։ Արվեստի աշխարհում իրեն արտոնյալ զգալով (և ոչ գեղարվեստական խոսքի անբավարար զգացողությունների), ձեռնածություններ է թույլ տալիս լեզվի մեջ, գեղարվեստական խոսքը վեր ածում շոր արձանագրության և կամ սենտիմենտալ զեղումներին... Ավելորդ է ասել, որ չափի զգացման պակասը համապատասխանորեն եթե ավելացնում է վեպի ծավալը, ապա ոչինչ չի ավելացնում դրա գեղարվեստական արժանիքներին։ Սրա հետ մեկտեղ մենք չենք կարող անգիտանալ և արձակի ճանաչված վարպետ Գուրգեն Մահարու վեպի հաջողված էջերը։ «Այրվող այգեստաններ» վեպում կան գեղեցիկ պատկերներ, սրամիտ դիալոգներ, հաջող են կերտված Սրբուհի խաթունի և Միհրանի մոր կերպարները, լավ է ամրողը 19-րդ ասքը և այլն։ Այս ամենը, սակայն, կրկնապատկելու դեպքում իսկ չի կարող փրկել վեպը, որը իր հիմքում ձախողված է՝ պատմական փաստերի հետ ոչ մի առնչություն չունեցող հեղինակի մտացածին և հակագիտական կոնցեպցիայի պատճառով։

Մեր պատմաբանները իրենց մի շարք աշխատություններում ցույց են տալիս, թե ժամանակակից թուրքական պատմագրությունն ինչպիսի ջանքեր է թափում՝ կեղծելու համար մոտ անցյալի պատմական իրադարձությունները։ Նրանց հեղինակները (Էսադ Ուրաս, Ջեմալ Քութայ) հայ ժողովրդի պատմության զանազան շրջաններին նվիրված իրենց ուսումնասիրությունների մեջ նախ փորձում են հաստատել այն միտքը, թե Արևմտյան Հայաստանի տերիտորիայի բնակիչները եղել են թուրանական ցեղերը և մեկ զարկով ջնջում են պատմական Հայաստանի գոյության փաստը։ Այնուհետև, ամեն կերպ փորձում են իրերի դրությունը ներկայացնել այնպես, թե մինչև հայկական ազգային կուսակցությունների երևան գալը Թուրքիայում չեն նկատվել ազգային-ազատագրական, հակաթուրքական շարժումներ, և որ օսմանյան կառավարությունը երբևէ չի առաջնորդվել հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման ծրագրով։ Հայկական ջարդերը եղել են լրարբեր 10—8

միմիայն ազգային կուսակցությունների կոմիտեների գործունեության հետևանքով, ինչպես այդ հեղինակները, այնպես էլ տխրահռչակ Թալեաթ փաշան իր հուշերում փորձում են առանձնապես 1915 թվականի եղեռնը գնահատել իբրև հայկական ապստամբությունները սանձահարելու միջոցառում, դրա ամբողջ պատասխանատվությունը գցելով շարժումներն առաջացնող «ցեղերի» վրա:

Չղեկավարվելով գիտական կայուն սկզբունքներով, «Այրվող այգեստանների» հեղինակը լուրջ հեղումների և անպատասխանատու հանաք-զրույցի ձևով քննարկելով Վանի ու վանեցիների հետության հարցը, թերևս անուղղակիորեն, բայց հաստատում է պատմության վերահիշյալ կեղծարարների առաջին դրույթը: 1915 թվականի մեծ եղեռնի նախապատմության դրվագներում հեղինակը հարկ չի համարում գեթ մի խոսքով կանգ առնել երկրում ազգային ազատագրական շարժումների անցյալի փաստերի վրա, մի բան, որ, մեր կարծիքով, պետք է անպայման հենք ծառայեր հետագա էտապի հերոսական իրադարձությունների համար:

Ի վերջո, չկողմնորոշվելով «Հայկական հարցի» պատմական ակունքների և դրա զարգացման ընթացքի հետ կապված փաստերի մեջ, «Այրվող այգեստանների» հեղինակը ակամայից կրկնում է Թալեաթի հորինած այն սուտը, որի համաձայն Թուրքիայում հայ տարրի բնաջնջման քաղաքականության համար մեղավոր են եղել միմիայն իրենք հայերը, նրանց կոմիտեներն ու օտարամուտ գործիչները: Այսպիսիք են փաստերը:

Ասացինք, որ Գուրգեն Մահարու վեպի քաղաքական նպատակադրումը անմիջաբար կապվում է հեղինակի գեղարվեստական մտածողության հետ: Եվ քանի որ արատավոր է քաղաքական հարցերի մեկնակետը, արատավոր է և այդ գաղափարներին ծառայեցված գեղարվեստական մտածողությունը:

Մեծ Զերնիշեսկին խոսելով գեղարվեստական երկի գնահատման չափանիշի մասին, գրողի տաղանդի և կյանքի ճանաչողական նրա կարողության հետ մեկտեղ պահանջում է առաջավոր աշխարհայացքի առկայությունը: Միայն առաջավոր աշխարհայացքով տոգորված ստեղծագործությունն է, որ կարող է խոր հետք թողնել գրականության պատմության մեջ, — գրում է Զերնիշեսկին, «տաղանդի ուժը ճշմարտության մեջ է, և սխալ ուղղությունը կարող է կործանել ամենաուժեղ տաղանդն իսկ»⁷, — շարունակում է նա: Ինչ վերաբերում է արդեն հրապարակ իջած ձախողված երկին, ապա Զերնիշեսկին պահանջում է առանց հաշվի առնելու գրողի հեղինակության հարցը, իրերը կոչել իրենց իսկական անուններով, ամենայն վճռականությամբ ասել, որ այդ գործը ողորմելի է, և վնասակար՝ իր բովանդակությամբ և ուղղությամբ: Որ գաղափարապես, հետևապես և արվեստի առումով ձախողված գրական ստեղծագործության նկատմամբ ոուս հեղափոխական դեմոկրատները որևէ դիջում չէին ընդունում, այդ շատ ակնառու երևում է Գոգոլի գրքի փաստից: 1847 թվականին տպագրվում է Ն. Վ. Գոգոլի «Ընտիր հատվածներ ընկերներին գրած նամակներից» ուսակցիոն երկը: Ողջ հետադիմական ուժերը ցնծության աղաղակներով են ընդունում մեծ գեղագետի մոլորությունը, նրա այսպես ասած, դարձը՝ դեպի պաշտոնական Ռուսաստան: Հայտնի է այդ գրքին Բելինսկու տված սպանիչ գնահատականը: Այդ անձնական հարց չէր. Բելինսկին չէր կարող լռել, «եթե կրոնի քողի և մտրակի պաշտպանության տակ սուտն ու անբարոյականությունը քարոզում են որպես ճշմարտություն և առաքինություն»: «Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե իմ կամ ձեր անձնավորությանը, — գրում է Բելինսկին Գոգոլին, — այլ այնպիսի մի առարկայի, որը շատ ավելի բարձր է ոչ միայն ինձնից, այլև նույնիսկ ձեզնից. այստեղ խոսքը վերաբերում է ճշմարտությանը, ուս հասարակությանը, Ռուսաստանին»: Ի պատասխան Թոտկինի հանդիմանական նամակին (թե Բելինսկին ինչու այնպես դաժանորեն էր վարվել Գոգոլի հետ, նրա գրքի մասին գրած գրախոսականում), Բելինսկին անձնական նամակում բացատրում է իր ելակետը. «հանդուրժողականությունը մոլորության նկատմամբ ես դեռ կարող եմ հասկանալ... Սակայն չեմ կարող հանդուրժողականությունը ներել ստորության նկատմամբ: Դու վճռականորեն չես հասկացել այս գիրքը, եթե նրա մեջ սոսկ մոլորություն ես տեսնում, և դրա կողքին չես տեսնում դերասանությամբ հաշվարկված ստորությունը»⁸:

Ռուս գրականության պատմության խիստ ուսանելի այս էջը մեզ օգնում է կողմնորոշվել և «Այրվող այգեստանների» գնահատման հարցում: Այստեղ նույնպես խոսքը վերաբերում է ժողովրդին, նրա պատմական անցյալին, ազատագրական պայքարի նրա ազնիվ ավանդներին, և հազիվ թե այս հասկացողությունների աղավաղումը սոսկ մոլորության հետևանք է: Մեր գրախոսականը շատ միակողմանի և պարզամիտ կլիներ, եթե փորձեինք պնդել, թե Գուրգեն Մահարին թույլ է տվել որոշ սխալներ և անճշտություններ, որոնք շատ կամ քիչ չափով խոցելի են

⁷ Н. Г. Чернышевский, Полн. собр. соч., т. 2, стр. 240.

⁸ В. Г. Белинский, Собр. соч. в 3-х томах, т. 3, стр. 894.

դարձրել վեպը: Բանն այն է, որ մեղանշելով պատմական ճշմարտության դեմ, Գուրգեն Մահարին մեծ հետևողականությամբ պարզացնում է խնամքով մշակված իր դրույթները և մինչև վերջ հավատարիմ մնում դրանց (ոչինչ, որ այդ ճանապարհին նա գոհում է Վանի հերոսամարտը և սայթաքում մինչև թուրք պատմագրության թեզերի դիրքերը): Նա խորապես գիտակցում է, թե ինչ է ուզում, գիտակցում, թե ինչ է ասում: Ամբողջ զաղտնիքը նրանում է, որ Մահարին շատ պարտավորեցնող խնդիր է առել իր վրա, քան սոսկ Վասպուրական աշխարհի պատմության արտացոլումն է: Նա փորձում է «մեծ» ընդհանրացումներով պատկերել հայ ժողովրդի նոր դարերի պատմության եղերական վախճանը Արևմտյան Հայաստանում, և մեղադրական իր խոսքն ասել այդ հատվածի հայերի ողորդական ճակատադրի համար մեղավորներին: Եվ քանի որ նա այն պատրանքն ունի, թե գտել է մեղավորներին, պատմական վեպի լուրջ ժանրը դարձրել է երգիծական մի պատում, որի 600 էջերում անզուսպ եռանդով կարդում է հայ «ամբարիշտ» կուսակցությունների և «շաղակրատ» ու «անբան» մտավորականության դատավճիռը (Փա՛ռք Օհանես աղային): Մահարին շատ հեշտությամբ այդ մեղավորների վտիտ ուսերին է բարդում «Արևելյան հարցի» մի անլուծելի ճյուղի՝ «Հայկական հարցի» տապալման մեղքը: Ահա ամբողջը: Այստեղ տեղին է հիշել անցյալի մեր մամուլի օրգաններում պահպանված մի գրույց: Եվրոպական դիվանագետներից մեկը աղչկան ամուսնացնում է մի ջահել լրագրողի հետ: Երբ խոսք է բացվում օժիտի մասին, հայրն ասում է իր ապագա փեսային, թե աղջիկը օժիտ չունի, բայց ինքը նրան ժառանգություն թողնում է «Արևելյան հարցը», որը դիվանագետների և լրագրողների մի քանի սերունդ կերակրելուց հետո դեռ շատ տասնամյակներ կծառայի նրանց հետնորդներին: Գուցե սարքված է, բայց այդ հարցի պատմությունը խորհել է տալիս. թե հայ ժողովրդի պատմության նոր դարերի շրջանի այս, թերևս ամենապարթև պրոբլեմին ձեռք մեկնել ցանկացող բարեխիղճ վիպասանը հագիվ թե իրեն թույլ տար «Հայկական հարցը» կտրել պատմական այն բարդ հանգույցներից, որոնց զամված էր նա ճակատագրի բերումով և պատմության (թեև ոչ արդարացված) տրամաբանությամբ: Հավատարմություն պատմական ճշմարտությանը, հավատարմություն ժողովրդի պատմությանը և ստեղծած ավանդներին — ահա թե ինչ էր պետք վիպասանին՝ հայ ժողովրդի պատմությանը մերձենալու համար, և ո՛չ կամայականորեն չափված ու ձևված մի ծրագիր, որը «գործիչների» հետ գերեզման է շարտում և ժողովրդին, այն էլ՝ բնավ ոչ «արքայաբար», ինչպես խոստանում է ընթերցողին «Այրվող այգեստանների» բնաբանը:

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ